ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի օգոստոսի 25-ի №Ե-456-21 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանին պատկանող սպառման համակարգը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին միացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի և «Ղարաբաղցյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված՝ սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի հիման վրա՝ համաձայն հավելվածի.

2) սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիրը կնքվում է Հայաստանի

Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի դիմումն առձեռն ներկայացվելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացվելու դեպքում՝ դիմումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանին և «Ղարաբաղցյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հոկտեմբերի 2021թ.